ՆՈՐԱՏԻՊ ՄԱՏԵԱՆ

ՄԱՍԻԼԵՈՆԻ

ԵՊԻՍԿՈՊՈՍԻ ԿԼԵՐՄՈՆԱՑ

ՓՈՔՐԻԿ ՔԱՌԱՍՆՈՐԴՔ

ԹԱՐԳՄԱՆԵԱՑ

Հ. ԱՐՄԷՆ ԿՈՄԻՏԱՍ ԲԱԳՐԱՏՈՒՆԻ

Ի ՄԽԻԹԱՐԵԱՆՑ

ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ

Տասնեքին Քարոզքս կամ Ճառք բարոյականք հոգեշունչ ճարտարախօսին՝ Եպիսկոպոսին Մասիլեոնի գալլիացւոյ, խօսեցեալ են 'ի քառասնորդս 1717 ամին յատենի Լուդովիկոսի կամ Լուդուիկեայ արքայի ԺԵ, և արքունեացն և աւագանւոյն, մինչդեռ տակաւին իննամեայ մանուկ կրտսեր էր արքայն՝ որդի Թոռին Լուդուիկոսի Մեծի ԺԴ։ Զի սա միայն էր մնացեալ յօրինաւոր թագաժառանգաց նորին. իսկ հէք որդի նորա և թոռն յուսադիր, որպէս և Ադելայիդ տիկին՝ մայր արքայի մանկանն և եղբայր մի նորա հնգամեայ, վաղամեռիկ մահուամբ զրաւեցան՝ գրեթէ երեքին միանգամայն 'ի միում ժամանակի, յերկարակեաց թագաւորութեան և 'ի խոր ծերութեան Մեծին. և տէրութիւնն էր ընդ խնամապետութեամբ Փիլիպպեայ իշխանին Օռլէանայ, եղբօրորդւոյ նորին, և աւագախումբ ատենի խորհրդականաց։

Ծանր խրատք և մեղմով իմն խիստ յանդիմանութիւնք հոգեառանդն քարոզչիս յունկն այնպիսի ակմբի՝ մի ումեք զարմանս թուեսցին, զի առաւելագունի քան զայնս կարօտ էր ժամանակն, և ոմանք յունկնդրաց անտի, և նոյն իսկ խնամակալն պետութեան. յորոց և ճարակեցաւ ժանտն ընդ անցեալ դարն գրեթէ բովանդակ։ Սակայն ազգին և արքունեացն պատկառանք, խոհականութիւն քարոզչին, թերևս և զգուշութիւն նորա 'ի գայթագղելոյ մանկանն անմեղի, յայսչափ ևեթ համարձակեցին զնա. որում եթէ քաջ ոք միտ դնիցէ, ոչ շատ ինչ պակաս դտցէ մնացեալ քան զարժանն, կամ հակառակ ինչ աւետարանական անպատկառ բեմբասացի. թէպէտ և պտուղ՝ զհակառակն երևեցոյց դարն։ Բայց են և որ կարծեն, թէ ողջամիտ՝ արդար և անմեղ համարձակախօսութիւնք ինչ ճառիցս 'ի նպաստ իրաւանց ժողովրդեան՝ պատճառս իմն իցեն տուեալ անիրաւ ապարատանութեան ռամկին և մատենագրաց ոմանց, որոյ կատարածն թէ զինչ եղև, վկայէ պատմութիւնն, և գոն իսկ ցայսօր ականատեսք անցիցն անցելոց։

Իսկ 'ի ճառիցս աստի, ասիցէ ոք, զինչ օգուտ ազգիս մերում, որոյ ոչ թագաւոր է հայախօս, և ոչ իշխան ոք պետական։ — Սակայն են և իցեն առաջնորդք, աւագք և մեծամեծք ըստ կարգի և աշտիճանի՝ եկեղեցականք և աշխարհականք. և նոցա 'ի շահ մեծ կարէ լինել, եթէ կամիցին միայն՝ ոչ իմանալ ևեթ զաստուածեղէն և զզգօնութեան խրատն, այլ և յանձինս իւրեանց պատշաճել երկիւղած մտաք և սրտիւ։ Թող զի 'ի հոգևոր և հանճարեղ պերճաբանութեան մի մի չքնաղ և նախանձելի գոհար ականք են ճառքս, 'ի փոքու մեծագինք։